ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ինտերնյուս Նեթվորքի ենթադրամաշնորհառու Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

Երևան, 2024

Բովանդակություն

Ներածություն 3
Հետազոտության մեթոդաբանությունը 3
Ինչու՞ է կարևոր մեդիագրագիտությունը դպրոցում 5
Մեդիագրագիտությունը դպրոցում և առկա փորձը 6
Ի՞նչ է պետք աշակերտներին ուսուցանել 9
Մեդիագրագիտությունն առանձին առարկա՞, թե՞ ինտեգրված այլ առարկաներում 10
Ուսուցիչների կարիքները 12
Ընտանիքի դերը և մեդիագրագիտությունը 15
Համագործակցություն և դերակատարներ 17
Եզրակացություն և առաջարկներ 23

Ներածություն

Ժամանակակից աշխարհում մենք մշտապես շրջապատված ենք տեղեկատվությամբ և մեդիայով: Մեդիան՝ տեղեկություններից մինչև սոցիալական ցանցեր, դարձել է առօրյա կյանքի մի մասը, ինչպես նաև հայտնվել է տարբեր գիտակարգերի և մասնագետների ուշադրության կենտրոնում: Մեդիայի տարածումը առօրյա կյանքում նաև առաջացրել է այն հասկանալու և կիրառելու հմտությունների անհրաժեշտությունը, որն էլ հենց մեդիագրագիտությունն է: Քանի որ մեդիայից օգտվում են բոլորը՝ փոքրից մեծ, դրանից օգտվելու հմտություններն անհրաժեշտ են բոլոր տարիքային խմբերի անձանց: Այդ է պատճառը, որ մեդիակրթության ու մեդիագրագիտության ուսուցանման ծրագրերը թիրախավորում են թե՛ առավել փոքր տարիքի անձանց՝ մանկապարտեզից սկսած, թե՛ մեծահասակներին՝ առանց տարիքային սահմանափակման:

Սույն հետազոտությունը, մասնավորապես, թիրախավորում է դպրոցներն ու դպրոցահասակ երեխաներին և նպատակ ունի հասկանալու, թե ինչպես կարելի է դպրոցներում տարածել մեդիագրագիտությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

- հասկանալ մեդիագրագիտության ուսուցանման ներկայիս իրավիճակը հայաստանյան դպրոցներում,
- հասկանալ թեմաներն ու մեթոդները, որոնք կարող են նպաստել մեդիագրագիտության տարածմանը դպրոցներում,
- հասկանալ մեդիագրագիտության ինտեգրման հնարավորությունը դպրոցներում,
- հասկանալ ուսուցիչների կարիքները և հիմնական խնդիրները մեդիագրագիտության ուսուցանման գործընթացում,
- հասկանալ ընտանիքի դերը դպրոցներում մեդիագրագիտության տարածման հարցում,
- հասկանալ տարբեր դերակատարների գործառույթները դպրոցներում մեդիագրագիտության տարածման հարցում,
- ներկայացնել առաջարկներ դպրոցներում մեդիագրագիտության տարածման վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, հետազոտությունն անդրադառնում է դպրոցներում մեդիագրագիտության ներդրման կարևորության, ներկայիս իրավիճակի, ուսուցանման թեմաների և տեխնիկաների, ուսուցիչների կարիքների, ընտանիքի դերի և համագործակցության թեմաներին:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության իրականացման համար ընտրվել է որակական մեթոդաբանությունը: Կիրառվել են տվյալների հավաքման ֆոկուս խմբային քննարկումների և փորձագիտական հարցազրույցների մեթոդները:

Իրականացվել է չորս ֆոկուս խմբային քննարկում՝

- ուսուցիչների հետ, որոնք իրենց առարկաներում ներառել են մեդիագրագիտությանն առնչվող թեմաներ,
- ուսուցիչների հետ, որոնք մեդիագրագիտությունը դեռևս չեն ներառել իրենց դասընթացներում,
- միջին և ավագ դպրոցների աշակերտների հետ,

- դպրոցահասակ աշակերտներ ունեցող ծնողների հետ:

Ինչպես նաև իրականացվել է տասը փորձագիտական հարցազրույց պետական կառույցներում, միջազգային կազմակերպություններում, կրթական և ակադեմիական կառույցներում և հասարակական ոլորտում գործունեություն ծավալող մասնագետների հետ, որոնք զբաղվում են մեդիագրագիտությանն առնչվող հարցերով:

Հետազոտությունն իրականացվել է 2023 թ. դեկտեմբեր և 2024 թ. հունվար ամիսներին:

Ինչու՞ է կարևոր մեդիագրագիտությունը դպրոցում

Հետազոտությունն առաջին հերթին անդրադարձել է մեդիագրագիտության ուսուցանման կարևորությանը դպրոցներում: Թե՛ փորձագետները, թե՛ ուսուցիչները, և թե՛ ծնողները կարծում են, որ մեդիագրագիտությունը դպրոցներում ուսուցանելը մի քանի առումներով է կարևոր: Նախ, տեխնոլոգիաների զարգացմամբ և դպրոցահասակ երեխաների շրջանում մեդիայի և թվային գործիքների օգտագործման հաճախականացմամբ առաջ է եկել նաև դրանք գրագետ օգտագործելու խնդիրը: Դրանով պայմանավորված՝ նաև առաջացել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են առցանց անվտանգությունը, ներառյալ մեդիա մանիպուլյացիաները, անձնական տվյալների պաշտպանության հարցերը, կիբեռբուլինգը և այլն: Հետևաբար նաև առաջացել է դեռևս վաղ տարիքից երեխաներին մեդիայի հետ աշխատել սովորեցնելու հրամայականը: Փորձագետների մի մասը նաև նշում է, որ մեդիագրագիտության կարևորության խնդիրը ուժեղացել է հատկապես արցախյան 44-օրյա պատերազմից հետո, երբ ի հայտ եկան մեդիա մանիպուլյացիաների, կեղծ տեղեկության տարածման բազմաթիվ դեպքեր: Չնայած որ շատերն են նշում, որ այսօր պատանիներն ու երիտասարդները ավելի հմուտ են կարողանում օգտվել թվային գործիքներից, սակայն դրանց գրագետ օգտագործման առումով այդքան էլ հմուտ չեն և գիտելիքի պակաս ունեն:

> «Այսօր զարգացել են մարքեթինգային տեխնոլոգիաները, ալգորիթմական տեխնոլոգիաները, այսօր շատ հեշտացել է փափուկ, աննկատ ձևով մարդկանց վրա ազդելը»: Փորձագետ

> «Այդ ռիսկերը շատ տարբեր են երեխաների համար. դա անձնական տվյալների ոչ բավարար պաշտպանված լինելն է, և դա ուրիշներին հասանելի դառնալն է, այսինքն՝ անձնական տվյալների հրապարակումը, դա կիբեռբուլինգի տիրույթն է, դա երեխաների նկատմամբ սեռական առցանց բռնության ամենատարբեր դրսևորումներն են»: Փորձագետ

> «Չեմ կարող համաձայնվել այն կարծիքի հետ, որ երեխաները ավելի մեդիագրագետ են, կարծում եմ՝ նրանք ավելի հմուտ են տեխնիկական առումով՝ տեխնիկական միջոցներ օգտագործելու տեսանկյունից, բայց ֆիլտրելու, ընտրելու, լավն ու վատը տարբերակելու, կենսափորձի պակասի հետևանքով խնդիրներ ունեն՝ ավելի հեշտ են թիրախավորվում և թակարդն ընկնում»: Մեդիագրագիտություն չուսուցանող ուսուցիչ

> «Կարծում եմ, որ պետք է հասկանալ այն *[խմբ.՝ մեդիան]*, որպեսզի խուսափել վատ իրավիճակներից: Մեդիան, ինչքանով, որ լավ ազդեցություն է թողնում, այնքանով էլ վատը կարող է լինել և, որպեսզի խուսափել այդ վատ ազդեցությունից (ապատեղեկատվությունից, ստից), պետք է հասկանալ, թե ինչպես է աշխատում մեդիան»: Աշակերտ

> «Որպես ծնող մտահոգված եմ և կարևորում եմ մեդիագրագիտության թեման, հատկապես երեխաների համար, քանի որ հասկանում եմ, թե մեր օրերում ինֆորմացիայի ինչ հսկայական աղբի հոսք է թափվում նրանց վրա, որից նրանք պետք է կարողանան զտել, տարբերակել իրենց համար անհրաժեշտը և կարողանան խուսափել վտանգներից: Սա մեր ժամանակների մարտահրավերներից է»: Ծնող

Ընդհանուր առմամբ, ըստ հետազոտության մասնակիցների, մեդիագրագիտությունը դպրոցահասակ երեխաների շրջանում կարևոր է տարածել. այն զարգացնում է հարցեր տալու, տարբեր տեղեկություններին քննադատաբար վերաբերվելու, առցանց անվտանգությունը ապահովելու, անձնական տվյալները պաշտպանելու, կեղծ և մոլորեցնող բովանդակությունը տարբերակելու և չտարածելու կարողությունները՝ այդպիսով նաև նվազեցնելով նրանց խոցելիությունը մեդիառիսկերից:

«Քաղաքացին պետք է ունենա մեդիագրագիտության նվազագույն հմտությունները, որպեսզի նախ ինքը չվնասվի, ապա նաև այդ տեղեկատվությանը հանդիպելիս իր կարծիքները և իր պատկերացումները չմոլորեցվեն, ու չենթարկվի մոլորեցնող կամ քարոզչական նյութերի ազդեցությանը, նաև դրանք չտարածի, հասարակության այլ անդամների չվտանգի, և նրանք այդ շղթայի մի մասը չդառնան (քարոզչամեքենաների, ապատեղեկատվության հոսքերի)»: Փորձագետ

Մեդիագրագիտությունը դպրոցում և առկա փորձը

Հետազոտությանը մասնակից փորձագետները նշում են, որ ի տարբերություն նախորդ տարիների, ներկայումս մեդիագրագիտության մասին ավելի շատ են խոսում ընդհանուր առմամբ և կրթական համակարգում՝ մասնավորապես: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ մեդիագրագիտությանն ուղղված նախաձեռնությունները մեծամասամբ իրականացվում են քաղաքացիական հասարակության կառույցների կողմից (Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, Հանրային լրագրության ակումբ, DVV ինթերնեյշնլ)՝ ներառյալ դպրոցներում և ավելի քիչ հենց դպրոցների և պետական կառույցների (Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն հիմնադրամ (ԿԶՆԱԿ)) կողմից:

Փորձագետները հատկապես շեշտում են, որ քիչ դպրոցներ են, որոնք ակտիվ են մեդիագրագիտությանն առնչվող նախաձեռնությունների առումով: Չնայած մեդիագրագիտությունը հանրակրթության պետական նոր չափորոշիչների ութ կարողունակություններից մեկն է[1], ինչպես նաև ուսուցիչների ատեստավորման բաղադրիչ է, նոր ներդրված լինելու պատճառով այն կրթական համակարգում դեռևս ինստիտուցիոնալացված չէ, և մեդիագրագիտությանն ուղղված նախաձեռնությունները փորձնական և հատվածային են: Իսկ այդ առանձին նախաձեռնությունների առկայությունն ու հաջողությունը մեծապես կապված են ուսուցիչների ցանկության և նվիրվածության հետ: Այստեղ հարկ է նաև նշել, որ ըստ փորձագետների, չափորոշիչների սահմանումը և առկայությունը դեռևս չի նշանակում, որ մեդիագրագիտությունը կտարածվի կրթական համակարգում: Պետք է հետևողական լինել նաև իրականացման փուլում, և ստեղծել համագործակցային միջավայր՝ տարբեր դերատակարների ներգրավվածությամբ:

«Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը և մի քանի կազմակերպություններ կան, որոնք շատ ինտենսիվ աշխատում են, և խմբակներ են ստեղծված, և պրոյեկտային ուսուցում կա, և մեդիագրագիտության շաբաթ է անցկացվում, վերջերս ԵՊՀ-ում դպրոցների պրեզենտացիա եղավ իրենց (դպրոցներում) մեդիա նախագծերի»: Փորձագետ

«1400 դպրոցից հաճախ ակտիվ են 200-300 դպրոցը, հենց սա է մեր խնդիրը, ուր գնում ենք նույն ուսուցիչն է, նույն դպրոցն է, նույն տնօրենն է, այսինքն՝ մենք հիմա ունենք խնդիր, որ այս ամենը կարևորվում է շատ քիչ թվով դպրոցներում»: Փորձագետ

«Չեմ կարող միայն բացասականը ասել, որովհետև կան շատ դրական դպրոցներ, բայց էլի անձերով է պայմանավորված, այսինքն՝ ինքն ինստիտուցիոնալ գործող մեխանիզմ չէ:

[1] ՀՀ կառավարության որոշումը ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Մանկավարժի նվիրվածությամբ են պայմանավորված երեխաների հետ տարվող աշխատանքները»: Փորձագետ

Դպրոցներում մեդիագրագիտության ուսուցանման առումով հաջորդ խնդիրը բովանդակային է: Փորձագետների մեծ մասն ընդգծում է, որ չնայած որոշ դպրոցներում տարբեր առարկաների, ծրագրերի և խմբակների շրջանակում մեդիագրագիտությանն առնչվող թեմաներ են քննարկվում, դրանք հաճախ մակերեսային են և խորքային գիտելիքներ չեն ապահովում թեմայի վերաբերյալ: Մասնավորապես, ելնելով աշակերտների հետ շփումից, նշվում է, որ վերջիններիս շրջանում կա պատկերացում, թե ինչ է մեդիագրագիտությունը, սակայն ավելի խորքային գիտելիքն ու պատկերացումը դեռևս թերի է:

«Բովանդակային խտության առումով դեռ դրան չեն հասել, տեխնիկական այդ առաջին մակարդակով գիտեն, որ, օրինակ, այդ վերնագրերով, կրկնվող «շտապ» վերնագրերը և այլն, չեն օգտագործվում, դրան լուրջ չպետք է վերաբերվել, բայց այն մի լուրը, որը ես լսում եմ ինչ-որ մի լրատվամիջոցով, արդյոք ես դրան պետք է վստահեմ միանգամից, հավատամ, թե ինֆորմացիան պետք է էլի ստուգել, թե ուրիշին էլ լսել: Այստեղ երեխաներն արդեն ավելի խորքային խնդիր ունեն»: Փորձագետ

Հետազոտությանը մասնակից ուսուցիչները, որոնք իրենց առարկաներում ինտեգրել են մեդիագրագիտությունը (դասավանդում են թվային գրագիտություն, անգլերեն, կենսաբանություն, հայոց լեզու, գրականություն, հասարակագիտություն, պատմություն առարկաները), իրենց հերթին նշում են, որ տարբեր դասարանների աշակերտների շրջանում քննարկվում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են մանիպուլյացիաները, ապատեղեկատվությունը, կեղծ նորությունները, լրագրողների դերը, աղբյուրներ գտնել և ստուգելու թեմաները, անձնական տվյալների պաշտպանությունը, թվային էթիկան, կիբեռբուլինգը և այլն:

«Անձնական տվյալների պաշտպանության թեմային հատուկ անդրադառնում եմ՝ բերելով զարմիկիս վատ օրինակը, որը ծնողի հեռախոսով խաղալով մեծ գումարներ էր ծախսել ու խնդրի առաջ կանգնեցրել ընտանիքին: Նման օրինակները շատ են, և կարծում եմ՝ պետք է դրանք բարձրաձայնել՝ նոր դեպքերը կանխելու նպատակով»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

«Դպրոցում թերթ ենք հիմնել, որի պատասխանատվությունը երեխաներինն է. և խմբագրումը, և համակարգչային ձևավորումը նրանց վրա է, նրանք հարցազրույցներ են անցկացնում, խաչբառեր ստեղծում: Արդյունքում, արտակարգ արտադրանք են ստեղծում, որը գնում է տպագրության»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

«Ուսուցիչներից շատ բան ենք սովորել, օրինակ՝ ինչպես հասկանալ տվյալ կայքը պաշտոնական է, թե ոչ»: Աշակերտ

«Մեր դպրոցում մեդիագրագիտությանը անդրադառնում են հասարակագիտության առարկայի շրջանակում: Մենք նաև մեդիագրագիտության խմբակ ունենք դպրոցում, որը հաճախ խաղերի միջոցով է ներկայացնում մեդիագրագիտության սկզբունքները»: Աշակերտ

Մեդիագրագիտության ուսուցանման մեթոդներից խոսելիս թե՛ փորձագետները, թե՛ ուսուցիչները նշում են դրանց բազմազանության մասին: Ներկայացված օրինակները ներառում են խաղերի տեսքով ուսուցանում, դեպքերի քննարկում, ֆիլմերի և տեսահոլովակների դիտում և քննարկում, նախագծերի իրականացում, բեմականացումներ, պաստառների և բուկլետների, փոդքասթերի, խաչբառերի ստեղծում և այլն: Ինչպես նշում են հետազոտությանը մասնակից ուսուցիչներից մի քանիսը, աշակերտները դասապրոցեսին ավելի հետաքրքրությամբ են ներգրավվում, երբ

կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ կամ ձևեր, որոնք նաև ենթադրում են թվային տեխնոլոգիաների կիրառում, մինչդեռ երկար տեքստեր կարդալը, դրանց հետ աշխատելը կամ դրանք վերլուծելը այնքան էլ գրավիչ չեն աշակերտների համար: Ինտերակտիվ և ավանդական դասապրոցեսից դուրս ֆորմատներն էլ հենց խորհուրդ են տրվում ուսուցիչների և փորձագետների կողմից կիրառել աշակերտների հետ մեդիագրագիտության թեմաները քննարկելիս, քանի որ այդ տեխնիկաները հնարավորություն են տալիս աշակերտներին լիովին ներգրավված լինել գործընթացի մեջ և լինել ոչ թե միակողմանի սովորողի կամ լսողի, այլ նաև գործողի դերում:

«Մեթոդներից խոսելիս ուզում եմ նշել, որ երեխաները շատ են սիրում վիզուալներ և մերժում են տեքստերը: Տեքստի հետ աշխատելիս հարկավոր է ինչ-որ ինտրիգ, բամբասանք, որի խայծը կարող են «կուլ տալ»: Տեքստի վերլուծությունը բավականին ձանձրալի է նրանց համար»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

«Մենք էլ փոդքասթներ ենք ստեղծում գրական գործերի վերաբերյալ: Նախապես հանձնարարվում է կարդալ որևէ ստեղծագործություն, հետո փոդքասթ ստեղծել՝ հարցեր ուղղելով միմյանց և լսարանին: Եվ՛ մեդիագրագիտությունն ենք խթանում, և՛ գրականության իմացությունը»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

«Մենք էլ հասարակագիտության ժամին տեսահոլովակների միջոցով էինք ծանոթանում մեդիագրագիտությանը՝ ինչպես պաշտպանել անձնական տվյալները»: Աշակերտ

«Ես կուզեի, որ մեդիագրագիտությունը մեզ մատուցվեր խաղերի տեսքով»: Աշակերտ

Հետազոտությանը մասնակցած փորձագետներից մի քանիսը նաև շեշտում են մեդիագրագիտության ուսուցանման այն առավելությունը, որ այն սիմետրիկ կամ երկկողմանի բնույթ է կրում, այսինքն՝ երբ ոչ միայն ուսուցիչներն են աշակերտներին սովորեցնում, այլ նաև իրենք են սովորում աշակերտներից: Սա հատկապես վերաբերում է տեխնիկական հմտություններին և գիտելիքներին, որոնց, ըստ հետազոտության մասնակիցների, աշակերտները հաճախ ավելի լավ են տիրապետում, քան ուսուցիչները:

Այս համատեքստում, մասնավորապես, մի խնդիր է բարձրաձայնվում: Փորձագետների մի մասը նշում է, որ տեխնոլոգիաների կամ համացանցի հետ խնդիր ունենալու դեպքում աշակերտները հաճախ չեն վստահում մեծահասակներին և օգնություն փնտրում են իրենց հասակակիցների շրջանում: Ըստ նրանց, ուսուցչի աշխատանքը արդյունավետ կլինի մեդիագրագիտության ուսուցման առումով, եթե այն հիմնվի գործընկերության վրա՝ միասին ծրագիր իրականացնել, միասին սովորել, միասին լուծումներ փնտրել, որն էլ իր հերթին հնարավորություն կտա վստահության մթնոլորտ ձևավորել աշակերտների և ուսուցիչների միջև: Աշակերտները եթե վստահեն ուսուցիչներին, նրանց կդիմեն նաև մեդիային և թվային տեխնոլոգիաներին առնչվող հարցերի և խնդիրների դեպքում: Հետազոտությանը մասնակից ուսուցիչները նույնպես նշում են, որ աշակերտները հաճախ իրենցից ավելի լավ են կիրառում տեխնոլոգիաները, և իրենք սովորում են աշակերտներից և շեշտում են, որ նորը սովորելու հանդեպ բաց լինելը նաև աշակերտներին ավելի է ներգրավում ուսուցման գործընթացում:

«Դպրոցներն ամենատարբեր ճանապարհներով են գնացել. ընդհուպ՝ խաղեր են ստեղծել, պաստառներ, բուկլետներ, բեմականացում, հազար ու մի հավես բաներ են երեխաները արել: Հետո իրենք դասարաններով պտտվել են, ամբողջ դպրոցի համայնքի համար են իրենց ստեղծած դասախոսությունը կարդացել, այսինքն՝ այն, ինչը իրենք են սովորել, գնացել են, սկսել են պատմել համայնքին: Անգամ ուսուցիչների համար են հանդիպումներ արել»: Փորձագետ

«Մեդիագրագիտության ու այս տեսակի նորարարական բաների լավը դա է: Քանի որ երեխաներն էլ հսկայական փորձ ունեն, հաճախ իրենք դառնում են դասատուի դասատու, ու ես դա շատ դրական եմ համարում, որովհետև երբ երեխաները ուսուցչին են սովորեցնում, իրենք էլ են ոգևորվում, ասում են՝ ես պետքական մարդ եմ դպրոցում»: Փորձագետ

«Բոլոր այն ծրագրերում, որոնք իրականանում են այս ոլորտում, գործընկերությունը պետք է լինի հիմքում՝ երեխաներ, երիտասարդներ և մեծահասակ, որը ենթադրում է՝ միասին լուծումներ ենք փնտրում, միասին սովորում ենք, որովհետև միայն այդպես կարելի է պատրաստված, կրթված մեծահասակին բերել պրոցես և վստահություն առաջացնել երեխաների մոտ, որ առցանց անվտանգության հարցերում կարող են դիմել մեծահասակների օգնությանը»: Փորձագետ

Այստեղ պետք է նաև նշել, որ այլընտրանքային մեթոդները և տեխնիկաները արդյունավետ են ոչ միայն աշակերտներին ներգրավված պահելու և ուսուցանելու առումով, դրանք անուղղակիորեն կարող են թիրախավորել ծնողներին և ընտանիքի այլ անդամներին, օրինակ, տնային առաջադրանքների կամ ընտանիքի անդամների հետ իրականացվող այլ աշխատանքների միջոցով:

«Օրինակ, խաղեր լինեն, որում ընտանիքի անդամները նույնպես ներգրավված կլինեն, որպեսզի ոչ ուղղակիորեն, բայց մեդիագրագիտությունը ազդի նաև ընտանիքի մյուս անդամների վրա: Օրինակ, կարող է տնային առաջադրանք լինի, որ երեխան ինտերվյու/ հարցազրույց անի տան անդամների հետ, հետո գնահատի, թե նրանք որքանով են մեդիագրագետ, ապա երեխան պետք է բացատրի նաև տան անդամներին»: Փորձագետ

«Պետք է ուղղակի այն նախագծային միջոցառումներում, որոնք երեխաներն անում են, ներգրավել ծնողներին, գոնե որպես նախագծերի արդյունքների ներկայացման ժամանակ մասնակիցներ, որ գան, նստեն, տեսնեն երեխաները ինչ են բացահայտել, բայց նաև որպես առաջադրանքի մաս, օրինակ, իրենք պետք է ոչ թե իրենց սեփական կարծիքը բերեն հաջորդ հանդիպմանը, այլ բերեն ընտանիքի կարծիքը, որպեսզի իրենք ընտանիքում ունենան քննարկումներ, դա կօգնի, որ ծնողները զգան իրենց ներգրավված և ավելի հետաքրքրված լինեն»: Փորձագետ

Ի՞նչ է պետք աշակերտներին ուսուցանել

Հետազոտության մասնակիցների հետ քննարկվել են նաև մեդիագրագիտությանն առնչվող թեմաները, որոնք առաջնահերթ են աշակերտների շրջանում ուսուցանելու համար: Նախ, առաջնային և ամենակարևոր հմտությունը, որ պետք է աշակերտներին ուսուցանել, քննադատական մտածողությունն ու վերլուծական կարողություններն են, ինչի պակասը դպրոցներում շատ է շեշտվում: Երեխաները պետք է կարողանան աշխատել ցանկացած տեղեկության հետ, տան հարցեր և փորձեն գտնել դրանց պատասխանները: Այսպիսով՝ քննադատական մտածողությունը պետք է լինի մեդիագրագիտության ուսուցանման հիմքում: Որոշ փորձագետներ նաև նշում են, որ քննադատական մտածողությունից զատ աշակերտները պետք է թվային տեխնոլոգիաներից օգտվելու գիտելիքներ ու հմտություններ ունենան, առանց որի մեդիագրագիտությանն անդրադառնալը համարում են ոչ այդքան արդյունավետ:

Իսկ ինչ վերաբերում է ավելի նեղ թեմաներին, ապա փորձագետներն ու ուսուցիչները կարծում են, որ ուշադրություն պետք է դարձվի մեդիագրագիտության հոգեբանական ասպեկտին, ներառյալ

մանիպուլյացիաները, քարոզչությունը, հատկապես պատերազմի և ներկայիս աշխարհաքաղաքական սպառնալիքների համատեքստում, ինչպես նաև առցանց անվտանգության անձնական տվյալների պաշտպանության, կիբեռբուլինգին առնչվող թեմաներին: Այս գիտելիքն ու հմտությունները հնարավորություն կտան դպրոցահասակ երեխաներին ունենալ պատկերացում այս երևույթների մասին և նվազեցնել իրենց խոցելիությունն առցանց հարթակում:

Հետազոտությանը մասնակից աշակերտները նույնպես նշում են, որ կցանկանային ուսումնասիրել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են առցանց անվտանգությունը, լրագրողի դերն ու էթիկան: Դրանից բացի, կարևորում են նաև աղբյուրների ստուգումը և ընդգծում են, որ կատարած առաջադրանքները ստուգելիս ուսուցիչները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն օգտագործված աղբյուրներին, և դա դարձնեն գնահատման չափանիշ:

> «Առաջնահերթ պետք է ներկայացվեն, որ քարոզչությանը զոհ չդառնան, մանիպուլյացիաները հասկանան: Մանիպուլյացիաները մակերեսորեն են հասկանում, որովհետև շատ խորքային է, նաև հոգեբանական տեսանկյունից այն գործիքները, որ կիրառվում են: Թվային անվտանգությունը՝ որպես մեդիագրագիտության բաղադրիչ, շատ կարևոր է: Ամենապարզ դասերը պետք է ընտրվեն»: Փորձագետ

> «Կիբեռբուլինգը հիմա աշխարհում, հատկապես երեխաների շրջանում գնալով ավելի մեծ թափ է հավաքում, այդ թվում՝ նաև Հայաստանում»: Փորձագետ

> «10-11-րդ դասարաններում, երբ մեդիան սկսեցինք ավելի շատ կիրառել, հասկացա, որ մեդիագրագետ լինելը անհրաժեշտություն է: Շատ կարևոր է, երբ ինչ-որ հետազոտություն է հանձնարարվում, որ ուսուցիչը ստուգի նաև այն աղբյուրները, որոնք օգտագործվել են հետազոտության ընթացքում»: Աշակերտ

Այս ամենին զուգահեռ էլ որոշ փորձագետներ հայտնում են այն մտահոգությունը, որ մեդիագրագիտության, թվային գրագիտության ուսուցանումը և տարածումը դպրոցներում դեռևս երաշխիք չէ, որ վերը նշված ռիսկերը կվերանան կամ կնվազեն:

> «Այս խնդիրը մեր դեպքում էլ կարող է լինել, երբ որ մեդիագրագիտության դասընթացներ ենք անում, դա բավարար չէ պնդելու համար, որ հարցը կլուծվի, որովհետև մեդիագրագիտությունը այնքան բարդ բան է, և իրենք այնքան խորամանկ մեխանիզմներ են աշխատացնում այդտեղ, որ անգամ ինչ-ինչ բաներ իմանալով՝ մարդը չի պաշտպանվում, երբեմն հնարավոր է փորձառու աղվեսի նման երկու ոտքով ընկնես թակարդը, այս ռիսկերն էլ պետք է դիտարկելլ»: Փորձագետ

Մեդիագրագիտությունն առանձին առարկա՞, թե՞ ինտեգրված այլ առարկաներում

Հետազոտությանը մասնակցած և՛ փորձագետները, և՛ ուսուցիչների մեծամասնությունը, և՛ ծնողները կարծում են, որ մեդիագրագիտությունը դպրոցներում պետք է ինտեգրված լինի տարբեր առարկաների շրջանակում, և ոչ թե հանդես գա որպես առանձին առարկա: Այս մոտեցումը մի քանի գործոններով է պայմանավորված: Նախ, մեդիագրագիտությունը առանձին գիտություն կամ գիտակարգ չէ, այլ ավելի շատ հմտություն և կարողություն, որը կարող է ինտեգրվել այլ գիտակարգերի և առարկաների շրջանում: Բացի այդ, մեդիագրագիտությունը առանձին առարկա սահմանելով՝ այն կարող է կորցնել իր արդյունավետությունը, քանի որ դա կարող է տանել նրան,

որ աշակերտներն այն կդիտարկեն որպես առանձին մի բան և չեն կարողանա տեսնել կապը այլ առարկաների և կյանքի հետ: Երրորդ գործոնն այն է, որ այսօր դպրոցները առանց այն էլ ծանրաբեռնված են և նոր առարկա ներդնելու տեղ և հնարավորություն չկա:

«Մեդիագրագիտությունը կոմպետենցիա է, գիտություն չի, այլ հմտություն է, իսկ այդ հմտությունը պետք է առարկայական, թեմատիկ, բնագիտական, հումանիտար ուղղությունների մեջ ներդրված լինի»: Փորձագետ

«Երբ առանձին է լինում, մարդկանց ուղեղներում առաջանում է նոր քառակուսի դաշտ, որը սկսվում է և վերջանում է այստեղ, ոչ թե ընդհանուր տարածված է բոլորի ու ամեն ինչի մեջ»: Փորձագետ

Առարկաները, որոնք, ըստ փորձագետների, կարող են ինտեգրել մեդիագրագիտությունը իրենց ծրագրում, բազմազան են՝ հասարակագիտություն, պատմություն, աշխարհագրություն, թվային գրագիտություն, գրականություն: Ծնողների կողմից կարևորվել է համալիր մոտեցման կիրառությունը, երբ աշխատանքը տարվում է բոլոր օղակներում՝ աշակերտներ, ծնողներ, ուսուցիչներ և այլն, ինչպես նաև մեդիագրգիտության մասնագետներից բացի այլ մասնագետների ներառումը՝ մեթոդիստներ, սոցիոլոգներ, հոգեբաններ և այլն

«Մեդիագրագիտությունը իր մեջ պարունակում է որոշակի հատվածներ, հատվածներից մեկը շատ լավ կարող է գալ նույն արդի պատմության ուսումնասիրությունից, մեր ժամանակների պատմության և աշխարհագրության ուսումնասիրությունից, դա քաղաքագիտությունն է, նաև մենք ունենք հասարակագիտություն առարկա, որ պետք է ընդհանրապես, հիմա հիմնականում կառուցված լինի մեդիագրագիտության շուրջ: Այդ երեք առարկաները՝ պատմությունը, աշխարհագրությունը և հասարակագիտությունը պետք է ձևավորի երեխայի մոտ ընկալում, որ բոլոր ժամանակների և այսօրվա տեղեկատվության աղբյուրները «պղտորված են»: Փորձագետ

«Այն պետք է լինի ոչ թե առանձին առարկա, այլ ինտեգրվի տարբեր առարկաների մեջ: Թվային գրագիտությունն էլ պետք է ներառել, բայց չնույնականացնել այն մեդիագրագիտության հետ»: Ծնող

Մեդիագրագիտության՝ առանձին առարկա, թե այլ առարկաներում ինտեգրված լինելու հարցի շուրջ տարբերվող են հետազոտությանը մասնակից այն ուսուցիչների կարծիքները, որոնք մեդիագրագիտությանն անդրադարձ չեն կատարում իրենց առարկաների շրջանում: Մասնավորապես նրանցից ոմանք կարծում են, որ մեդիագրագիտությունը կարող է և պետք է առանձին առարկա լինի և առանձին դասավանդվի դպրոցներում: Իհարկե, խոսքը միայն մեկ ֆոկուս խմբային քննարկման և մի քանի ուսուցիչների մասին է, և չի արտահայտում այս խմբին պատկանող բոլոր ուսուցիչների կարծիքը, սակայն սա այն հիմնական ակնառու տարբերությունն էր, որ դիտարկվել է այս խմբի և մեդիագրագիտության փորձագետների և իրենց դասընթացներում մեդիագրագիտությանն անդրադարձող ուսուցիչների խմբի միջև:

«Լավ կլինի, որ առանձին դասաժամեր լինեն, որ հատուկ ու պարտադիր անդրադարձ կատարվի այս ոլորտին, քանի որ ինտեգրելով այլ առարկաների հետ, համոզված չեմ, որ բոլոր ուսուցիչները կանդրադառնան դրան իրենց առարկայի դասաժամերին»: Մեդիագրագիտություն չուսուցանող ուսուցիչ

Տարբեր առարկաների շրջանակում ինտեգրված լինելուց բացի, փորձագետները նաև կարծում են, որ դպրոցներում կարելի է բացել մեդիագրագիտության խմբակներ և նախագծային ուսուցում իրականացնել:

«Ես համարում եմ, որ դա լավագույն մոդելներից մեկն է, բայց սրան զուգահեռ կարծում եմ, որ անպայման պետք է ունենալ ոչ թե դասընթաց առարկայի տեսքով, այլ օրինակ խմբակ կարող է դա լինել, որովհետև մենք իրեն առարկայի կարգավիճակ ենք տալիս՝ մենք ստիպողական, պարտադրանքի տարր ենք մտցնում սրա մեջ: Իսկ երբ մենք դա խմբակի ձևաչափով ենք անում, դա շատ ավելի խրախուսական է լինում»: Փորձագետ

Քննարկումներում շատ է նշվել նաև մեդիագրագիտության շաբաթը, որ կազմակերպվում է դպրոցներում: Փորձագետները և ուսուցիչները սա լավ հնարավորություն են համարում տարբեր դասարանների աշակերտների կողմից իրենց մեդիա գիտելիքներն ու հմտությունները ցուցադրելու, փորձի փոխանակման և նոր գիտելիքներ ձեռք բերելու առումով:

«Մեդիագրագիտության շաբաթը հիանալի է, որ մի շաբաթ դպրոցի տարբեր դասարաններ, տարբեր ձևաչափերով կարող են կոնֆերանսներ, հանդեսներ, պրեզենտացիաներ, ցուցահանդեսներ, քեյսեր անել»: Փորձագետ

«Մեր դպրոցի աշակերտներն էլ մեդիագրագիտության շաբաթվա շրջանակում մեդիա արշավ էին կազմակերպել դեպի քաղաքապետարան՝ մոտենալով անցորդներին հարցադրումներ էին անում մեդիագրագիտության վերաբերյալ՝ կիրառելով էթիկայի օրենքը, անպայման հարցնում էին կարելի է հարցվողին նկարահանել, թե ոչ»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

«Մենք էլ էինք դպրոցում կազմակերպել մեդիագրագիտության շաբաթ, որի ընթացքում տարբեր ուսուցողական խաղեր էինք խաղում, թռուցիկներ էինք մշակել և բաժանում էինք ցածր դասարանների աշակերտներին, որպեսզի իրենք էլ իրազեկված լինեն»: Աշակերտ

Ուսուցիչների կարիքները

Դպրոցներում մեդիագրագիտության տարածումը մեծապես կախված է ուսուցիչների գիտելիքներից և հմտություններից: Ինչպես հետազոտության մասնակից փորձագետներն են նշում, ուսուցիչները, անկախ իրենց դասավանդվող առարկայից, մեդիագրագիտության վերապատրաստումների և գիտելիքի կարիք ունեն: Ընդ որում, վերապատրաստումներից զատ նշվում է, որ թեման պետք է լինի նաև ուսուցիչներ պատրաստող կամ ուսուցչի որակավորում շնորհող ցանկացած ուսումնական հաստատության ծրագրերում, որպեսզի շրջանավարտները և ուսուցչական կարիերան նոր սկսող անձինք արդեն ունենան այդ գիտելիքն ու հմտությունները:

«Պետք է նախաձեռնություններ անեն Մանկավարժական համալսարանում, որ այնտեղ սովորող և ավարտող ուսանողները, որ ավարտելով գնալու են դասավանդելու, ունենան և մարդկային, և մասնագիտական կարողությունները, և որակները»: Փորձագետ

«Վերապատրաստումների մակարդակում այդ հարցը պետք է լուծվի: Այսինքն՝ ոչ թե ամեն դպրոցի 1-2 ուսուցիչ պիտի վերապատրաստվի և կոնկրետ մասնագիտության տեր ուսուցիչը պետք է վերապատրաստվի, այլ 34 հազար ուսուցիչն էլ պետք է վերապատրաստվի»: Փորձագետ

Վերապատրաստումների կարևորությունը շեշտում են նաև հետազոտությանը մասնակից ուսուցիչները, որոնք տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված վերապատրաստումների են մասնակցել: Վերապատրաստումներին մասնակցության շնորհիվ նրանք ստեղծել են մեդիագրագիտության ակումբներ կամ դարձել են մեդիագրագիտության դասավանդողներ՝ այսպիսով ընդգծելով վերապատրաստումների արդյունավետությունը:

«Դրամաշնորհի շահելուց հետո դպրոցում մեդիագրագիտության ակումբ ստեղծեցի, որը մինչ օրս գործում է՝ միջոցառումներ ենք կազմակերպում, աշակերտների ավագ սերունդը կրթում է փոքրերին»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

Հետաքրքրական է, որ վերապատրաստում անցած ուսուցիչները, որոնք մեդիագրագիտությանն առնչվող տարբեր նախաձեռնություններ են իրականացրել, նշում են, որ հաճախ իրենց դպրոցների այլ ուսուցիչների և վարչակազմի կողմից պիտակավորվում են որպես «թիթիզ բաներ անող», «դասը խաղի վերածող», «Եվրոպա քարոզող»: Նրանք նշում են, որ ուսուցիչների մի մասը դժվար է ընդունում նորամուծությունները և չի ցանկանում ուսումնական պլանում կամ ուսուցանման ձևում փոփոխություններ մտցնել, եթե դա ավելի բարձր գտնվող օղակների հրաման կամ պահանջ չէ:

«Դպրոցներում կա ուսուցիչների կարծրացած հատված, որը չի ընդունում որևէ նորամուծություն և շարունակում է անել այն, ինչ միշտ է արել: Նրանք չեն էլ ուզում խորանալ, չնայած կարծում եմ, որ խորանալու դեպքում շատ լավ էլ կընկալեն իմաստը»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

«Տարեց ուսուցիչներից նկատողություն եմ ստացել, որ դասը խաղի էր վերածվել»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

Վերապատրաստումների արդյունավետությունն ապահովելու համար, ըստ փորձագետների, պետք է հաշվի առնել ուսուցիչների թվային գրագիտության հմտություններն ու գիտելիքները, ինչպես նաև ուսուցիչների տարիքը և, ըստ դրա, վերապատրաստման մեթոդները և լեզուն:

«Մեր ուսուցչական համայնքի 60%-ը 40+ տարիքի է, հետևաբար այն ամենը, ինչ մտածում եք, այս թվերը աչքի առաջ պահելով պիտի լինի: Թրեյնինգները, որ պիտի իրենց համար արվի, չպիտի լինեն շատ cool բաներ, վիդեոբլոգինգ և այլն, որովհետև այդ մարդիկ այդ խմբի համար չեն»: Փորձագետ

Սակայն նաև շեշտվում է, որ վերապատրաստումները դեռևս երաշխիք չեն, որ ուսուցիչները դրանք կկիրառեն պրակտիկայում: Գիտելիքից ու հմտություններից զատ ուսուցիչները և դպրոցները նաև ձեռնարկների, ուղեցույցների, հետաքրքիր և քննարկման արժանի դեպքերի, տարբեր պիտույքների, խաղերի, տեխնոլոգիական հագեցվածության, փոխօգնության հարթակի կարիք ունեն: Այս ռեսուրսների առկայությունը կարևոր է ուսուցիչներին ուղղություն ցույց տալու, քննարկումների ժամանակ հարցեր առաջադրելու, քննարկվող թեմաների համար տեխնիկաներ առաջարկելու առումով: Նման ձեռնարկները կարող են բարձրացնել քննարկվող նյութերի արդյունավետությունը: Հասանելի ռեսուրսներից խոսելիս հետազոտությանը մասնակից փորձագետների և ուսուցիչների մեծ մասը նշում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից ստեղծված ձեռնարկը, որը ուսուցիչների շրջանում ծառայում է որպես առաջնային աղբյուր: Սակայն շատերը նաև նշում են, որ հայալեզու ավելի շատ ու բազմազան ձեռնարկների և ուղեցույցների կարիք կա:

«Այս պահին չկա ծրագիր, որով ուսուցիչները պետք է աշխատեն: Կա մեդիագրագիտության կոմպետենցիան, որը սահմանված է ու վերջ: Դրանից դուրս ոչ մի ուրիշ գործիք՝ որպես այդպիսին, ուսուցիչը չունի»: Փորձագետ

«Դա փաստ է, որ հանրակրթության ոլորտում մենք ունենք մասնագետների պակաս, ուսուցիչների վերապատրաստման խնդիր, ռեսուրսների պակաս, այսինքն՝ նյութերի, որ կարող են հեշտացնել մանկավարժի գործը, որն առանց այն էլ դժվար գործ է, և դրա համար կլինեն ուղեցույցներ, քայլ առ քայլ դասապլաններ, այնպիսի փաթեթ, որը հնարավոր կլինի կիրառել տարբեր առարկաներ դասավանդելիս»: Փորձագետ

«Շատ ուսուցիչների համար ձեռնարկի բովանդակությունը բարդ ընկալելի է. ուստի նրանք չեն կարող փոխանցել այն աշակերտներին, անցնելով ձեռնարկի միայն 1-2 գլուխը»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

«Պետք է ստեղծել թեմատիկ ռեսուրսների բանկ՝ յուրաքանչյուր առարկայի համար, ինտեգրված մեդիագրագիտության բաղադրիչով»: Մեդիագրագիտություն չուսուցանող ուսուցիչ

Հաջորդիվ, առաջարկվում է նաև ստեղծել հետաքրքիր և քննարկման արժանի դեպքերի և իրադարձությունների շտեմարան, որն անընդհատ կթարմացվի և որից ուսուցիչները կկարողանան օգտվել իրենց առարկաների շրջանակում քննարկումներ ծավալելու և աշակերտների շրջանում մեդիա հմտությունները զարգացնելու համար:

«Լավ կլիներ մեր լրագրողները, որոնք հիմա նաև խորացած են մեդիագրագիտության մեջ, մասնագետներն իրենք անընդհատ քեյսեր հավաքեն, որոնք Հայաստանում ամեն օր լինում են, և ուսուցիչներին անընդհատ նոր քեյսեր տան, ուսուցիչները երեխաների հետ վերլուծեն, դրա կարիքը ինձ թվում է շատ կա»: Փորձագետ

Ըստ փորձագետների՝ վերապատրաստված ուսուցիչները ստացած գիտելիքների և հմտությունների կիրառությունն ու կայունությունն ապահովելու համար նաև խորհրդատվության, պարբերաբար հանդիպումների և քննարկումների, հետադարձ կապի, փորձի փոխանակման կարիք ունեն:

«Շատ կարևոր է ուսուցիչներին վերապատրաստելը, բայց նաև հետևողական պետք է լինենք, որ հասկանանք՝ այդ վերապատրաստված ուսուցիչն ինչ չափով է դա օգտագործել: Վերապատրաստվելը որակի և իմացության մասին չի խոսում, սա երկարատև աշխատանք է պահանջում, անընդհատ խորհրդատվություն, քննարկում, հետադարձ կապ, անդրադարձ»: Փորձագետ

Մեդիագրագիտության վերաբերյալ վերապատրաստում անցած ուսուցիչները այս առումով նշում են, որ ունեն հարթակ, որտեղ ներկա են նաև վերապատրաստողները: Այս հարթակն օգտագործում են իրենց փորձի, տարբեր նյութերի, խորհուրդների փոխանակման համար:

«Բավականին սերտորեն համագործակցում ենք միմյանց հետ. TEAMS-ում հարթակ ունենք, որտեղ ներգրավված են մեդիագրագիտության դասընթացների մասնակից ուսուցիչները, ունենք 5-7 վերապատրաստող, փորձը փոխանակող ուսուցիչներ, որոնք գործունեություն են ծավալում առցանց: Դասընթացների ժամանակ օգտագործում ենք նկարներ, կարճ տեսանյութեր, տեսագրված դասեր, ինչպես նաև բանավոր ենք փոխանցում մեր փորձը»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

Փորձի փոխանակումն, ընդ որում, կարևորվում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային համատեքստում՝ միջազգային փորձագետների և հաջողված փորձ ունեցող արտասահմանյան դպրոցների ուսուցիչների հետ: Այս առումով ամենահաճախ նշվել է Ֆինլանդիան՝ որպես մեդիագրագիտությունը իր կրթական համակարգում հաջողությամբ ինտեգրած երկիր, որից կարելի է շատ բան սովորել:

«Կարծում եմ նաև, որ շատ ոգևորիչ կլինեն փոխայցելությունները: Ուսուցիչները, մանկավարժները արձագանքող համայնք են: Ես կարող եմ փաստել, որ միակ համայնքը, որը իսկապես արձագանքում է յուրաքանչյուր վերապատրաստման նախաձեռնության յուրաքանչյուր որևէ ռեսուրսի հետ կապված, բովանդակությունը կիրառելուն ուղղված մեր ուղերձներին՝ դա հենց մանկավարժներն են: Մանկավարժներին սակայն անհրաժեշտ է նաև

խթան, ոգևորող որոշակի գործողություններ, միշտ չի որ դրանք պետք է գումարային տեսքով լինեն»: Փորձագետ

«Ֆինլանդիայում շատ լավ օրինակներ կան, իրենք ամբողջ կրթական համակարգը տարել են ինտեգրված դասընթացների մոդելով: Նախագծային ուսուցումը շատ լավ օրինակ է դրա համար, որովհետև աշխատելով նախագծի վրա, ոչ թե մի բնագավառում է խորանում, մի առարկայի շրջանակներում, այլ մեծ դիապազոնի, ինֆորմացիայի համտեքստ է, որի հետ ինքն աշխատում է»: Փորձագետ

Ընտանիքի դերը և մեդիագրագիտությունը

Հետազոտությունը նաև անդրադարձել է ծնողների և ընտանիքի դերին դպրոցահասակ երեխաների շրջանում մեդիագրագիտություն ուսուցանելու հարցում: Նշվում է, որ երեխաները հաճախ օրինակ են վերցնում ծնողներից, փորձում են կրկնօրինակել նրանց և վերջիններիս վարքագիծը դարձնել իրենցը՝ ներառյալ մեդիայի հետ շփման վարքագիծը: Իսկ ինչպես ցույց են տալիս հետազոտությունները[2], և այս հետազոտության շրջանակում նշում են մասնակիցներից շատերը, բնակչության (ծնողների) մեծ մասն ունի մեդիագրագիտության գիտելիքների ու հմտությունների պակաս:

Ծնողների մեդիագրագետ լինելը կարևոր է այնքանով, որ վերջիններս տեղյակ լինեն ռիսկերից, որոնց կարող են բախվել իրենց երեխաները մեդիան սպառելիս և կարողանան վերահսկել դրանք: Մինչդեռ, ինչպես փորձագետներն են նշում, որոշակի տարիքից սկսած երեխաները թվային գործիքներից ավելի հմուտ են կարողանում օգտվել, ավելի շատ գործիքակազմի են տիրապետում, ավելի շատ հավելվածներ են օգտագործում, ավելի շատ մեդիա բովանդակություն են ստեղծում, քան ծնողները: Եվ եթե ծնողը այդ ամենին չի տիրապետում, նրա համար ավելի դժվար է ստացվում իրականացնել այդ վերահսկողությունը կամ ուղղորդումը մեդիայի հետ առնչվելիս:

«Կարծում եմ, որ ծնողները սեփական օրինակով պետք է ցույց տան երեխաներին, թե ինչ նյութերով է պետք կիսվել և ինչ տարածել ընկերների շրջանում, ես փորձել եմ այն իմ սեփական օրինակով»: Ուսուցիչ

«Ծնողները առաջին հերթին պետք է իմանան, թե ինչ վտանգներ կարող են լինել, ինչ առավելություններ կարող է ունենալ թվային աշխարհը: Իրենք անգամ չգիտեն՝ ինչպես ուղղորդել իրենց երեխային և շատ հաճախ գերադասում են ոչինչ չանել, որովհետև եթե իրենք չգիտեն, իրենց հեղինակությունը կարծես նվազում է երեխաների աչքերում»: Փորձագետ

«Ծնողների մեդիագրագիտության պակասը շատ բացասական կարող է անդրադառնալ երեխաների մեդիագրագիտության մակարդակի վրա, բայց բացասական չի կարող անդրադառնալ երեխաների թվային գործիքների հմտությունների վրա, որովհետև երեխաները շատ ավելի առաջ են ընկնում: Եվ այս դեպքում արդեն եթե իրենք իրենց ծնողներից ավելի հմուտ են թվային գործիքների կիրառմամբ, շատ բաներ կարող են թաքցնել իրենց ծնողներից»: Փորձագետ

Այս առումով շատ է կարևորվում ծնողների և ընտանիքի՝ որպես դպրոցական համայնքի հետ աշխատանքը և գոնե մեդիագրագիտության բազային գիտելիքներ և հմտություններ փոխանցելը: Սա կարող է իրականացվել, օրինակ, ծնողական ժողովների միջոցով՝ դրանք օգտագործելով

[2] Ինտերնյուս Նեթվորք, Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտություն, https://media.am/hy/lab/2023/11/14/36724/

մեդիագրագիտության, առցանց անվտանգության և ռիսկերի վերաբերյալ զրույցների և քննարկումների համար: Սակայն, որպեսզի ուսուցիչները կարողանան ծնողներին փոխանցել այդ գիտելիքները և կարողանան ծնողների հետ աշխատել, նախ իրենք պետք է վերապատրաստում անցնեն և տիրապետեն այդ գիտելիքին:

«Իրենք ուսուցիչներն այնքան էլ կոմպետենտ չեն ծնողների հետ աշխատանքի հարցում, դժվարանում են փոխանցել հմտություններ, գիտելիքներ, թե ինչպես այս նոր ժամանակներում, այս նոր մարտահրավերների համատեքստում ծնողները կարողանան օգնել իրենց երեխաներին, որ չբախվեն այս անկանխատեսելի վտանգներին»: Փորձագետ

Ուսուցիչներից ոմանք նշում են, որ իրենց ծնողական ժողովների ընթացքում քննարկում են մեդիագրագիտության թեմաներ ծնողների հետ: Հետազոտության մասնակիցներից ոմանք էլ բերում են օրինակներ, երբ աշակերտները իրենք են ծնողների համար մեդիագրագիտությանը նվիրված դասեր իրականացրել՝ այդպիսով սովորեցնելով ծնողներին: Սակայն սրանք առանձին դեպքեր են, իսկ արդյունքի հասնելու համար պետք է այս պրակտիկաները շարունակական բնույթ կրեն դպրոցներում:

«Ծնողական ժողովները երեխաների վերաբերյալ անհատական զրույցների չեմ վերածում, խոսում եմ ընդհանուր թեմաներով՝ ուսուցանման մեթոդներից, մեդիագրագիտությունից»: Մեդիագրագիտություն ուսուցանող ուսուցիչ

«Դրա հետաքրքիր արդյունքներից մեկն այն է, որ աշակերտները հենց ծնողների համար կազմակերպել էին մեդիագրագիտությանը նվիրված դասեր, այսինքն՝ նման դեպքերում հիմա աշակերտներն են ծնողներին սովորեցնում»: Փորձագետ

«Դրա փոխարեն մենք կարող ենք ծնողական ժողովների ժամանակ հենց մեդիագրագիտություն իրականացնել կամ օրինակ գուցե ծնողների մեջ կա մասնագետ, որ կարող է դա անել, ամեն դպրոցում էլ կլինի մի ծնող, որը կարող է այդ թեմայով դպրոցին օգտակար լինել, պետք է քննարկեն մեդիագրագիտության հետ կապված հարցերը, մանավանդ հիմա արդեն գիտենք կիբեռբուլինգը մեծ տարածում է ստանում, և ծնողները շատ իրազեկված պետք է լինեն»: Փորձագետ

Ծնողներին իրապես նման նախաձեռնությունում ներգրավելը դպրոցից և ուսուցիչներից պահանջում է նաև հավելյալ ժամանակ, հաշվի առնել ծնողների զբաղվածությունն ու աշխատելու հանգամանքը և նման քննարկումները, օրինակ, կազմակերպել աշխատանքային ժամից հետո, որպեսզի ավելի շատ ծնողներ կարողանան ներկա գտնվել: Խնդիր կարող է լինել նաև ծնողների մոտիվացված չլինելը, թեման չկարևորելը կամ ռիսկերը չպատկերացնելը: Սրանք էլ պահանջում են լրացուցիչ ջանքեր և աշխատանք ծնողական համայնքի հետ: Օրինակ, փորձագետներից մեկը նշում է, որ եթե ծնողներին բացատրվի, թե երեխան ինչ վտանգների կարող է բախվել համացանցից օգտվելիս, ապա նրանք շահագրգռված կլինեն իմանալու ավելին՝ իրենց երեխաներին պաշտպանելու համար:

«Մենք ունենք ծնողների աջակցության կարիքը: Ասում ենք, որ երեխաներին սովորեցնում ենք այսինչ բաները, իրենք ունեն այսինչ հանձնարարությունները, հիմա մեզ պետք է ձեր օգնությունը այս հարցը լուծելու համար: Այսինքն՝ սովորեցրեցի ծնողներին, հետո դարձրեցի իրեն իմ գործընկերը այս գործում առաջ գնալու համար»: Փորձագետ

Ծնողների կողմից նույնպես, որպես մեդիագրագիտության տարածման կարևոր օղակ, առանձնացվել է ընտանիքը: Ինչպես ցույց են տվել ֆոկուս խմբային քննարկումները, մեդիագրագիտության ուսուցանումը ընտանիքում լինում է փոխադարձաբար. երբեմն երեխաները

սովորում են ծնողներից, որոշ դեպքում ծնողները սովորում են դպրոցում վերապատրաստում անցած իրենց երեխաներից: Ծնողները նշում են երեխաների շրջանում մեդիագրագիտության մասին ներկայիս գիտելիքների մի քանի աղբյուրներ՝ ընտանիքում փոխանցված գիտելիքներ, դպրոց, համացանց, ինքնակրթություն և այլն: Համաձայն ծնողների՝ դպրոցում երեխաները այս թեմային ծանոթանում են տարբեր միջոցառումների, վերապատրաստումների կամ հենց դասերի ընթացքում: Որոշ դեպքերում ծնողները նշում են, որ երեխաները տիրապետում են մեդիագրագիտության հիմնական սկզբունքներին, թեև որպես այդպիսին չեն անցնում այն որպես առանձին թեմա: Ծնողների կողմից կարևորվել է նաև տեսական գիտելիքներից բացի այդ գիտելիքների գործնական կիրառությունը:

«Մեր դպրոցում նախքան մեդիագրագիտություն անցնելը, սովորում են դե Բոնոյի 6 գլխարկների մեթոդը (փաստեր, զգացմունքներ, վերահսկողություն, ստեղծագործություն, առավելություններ, թերություններ), որը, կարծում եմ, ինչ-որ չափով հիմք է մեդիագրագիտությունն ավելի հեշտ ընկալելու համար»: Ծնող

Որոշ ծնողներ նշել են իրենց կողմից կիրառվող մեդիա աղբյուրների սահմանափակման և վերահսկման գործիքներ, օրինակ աղբյուրների սահմանափակումը, թվային գործիքներից օգտվելու սահմանափակումների կիրառությունը և այլն: Այնուամենայնիվ, ծնողները կարևորում են երեխաների շրջանում ընդհանուր մեդիագրագիտության բարձրացումը, քանի որ տեղեկատվության ստացման հիմնական մասը տեղի է ունենում ոչ ընտանիքում, և այդ տեղեկատվության նկատմամբ ծնողներն ունեն վերահսկողության սահմանափակ գործիքներ:

«Սեփական օրինակով կիսվելով, կարող եմ ասել, որ վերահսկողությունը կարևոր է՝ երբեմն անգամ ծնողները ստիպված են հետաքննություն անցկացնել, որպեսզի հասկանան, թե ինչ կայքեր, ֆորումներ, սոցցանցեր են այցելում իրենց երեխաները և հետ պահեն նրանց վտանգներից»: Ծնող

Համագործակցություն և դերակատարներ

Մեդիագրագիտության վերաբերյալ նախաձեռնությունների մասին խոսելիս հետազոտության մասնակիցներից գրեթե բոլորը նշում են Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի, Հանրային լրագրության ակումբի, ԿԶՆԱԿ հիմնադրամի, DVV ինթերնեյշնլի կատարած աշխատանքները տարբեր դպրոցների կամ կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Սակայն, ինչպես նշվում է, անհատների կամ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը հատվածական են՝ կախված դրամաշնորհներից, որոնց ավարտից հետո ծրագիրն էլ, համագործակցությունն էլ ավարտվում են, և շարունակականության ապահովման խնդիրն է առաջ գալիս: Այս առումով փորձագետները շատ են կարևորում մեդիագրագիտության ինստիտուցիոնալացման և համակարգային մոտեցման հարցը:

«Հաջողված է մեր համար Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի հետ կապված աշխատանքները, Հանրային լրագրության ակումբի հետ մեր աշխատանքները, Համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ է շատ հաջողված մեր համագործակցությունը»: Փորձագետ

«Դրամաշնորհն ես շահում քո կազմակերպության համար, քո ծրագիրն ես անում, դա խնդիր է մի քիչ, որովհետև դրամաշնորհային ծրագրերը մի խնդիր ունեն՝ իրենք ունեն իրենց պլանը, պլանը վերջացավ, փողը վերջացավ, վերջ, դրա համար այստեղ կա այդ

շարունակականության խնդիրը ու պետք է այնպես անել, որ նույն ԿԶՆԱԿ-ը, նախարարությունը՝ որպես մշտական գործող օղակներ շարունակեն այդ գործը»: Փորձագետ

«Շատ կարևոր է, որովհետև Հայաստանի ամենամեծ պրոբլեմներից մեկն է, մենք կղզիացած լիքը բաներ անում ենք, բայց սիստեմով չենք աշխատում, սիստեմ է պետք աշխատացնել, միշտ կարելի է գտնել մի լավ ուսուցիչ, մի լավ դպրոց, մի լավ ծրագիր բերել, ասել, ասենք, Հայաստանը կարող է գնալ միջազգային ասպարեզում լավ ներկայանա, բայց այդ կղզյակները սիստեմա չեն, ինձ պետք է մտնեմ ցանկացած դպրոց և հասկանամ, որ մեդիագրագիտությունը կարևորված է»: Փորձագետ

Ընդհանուր առմամբ, ինչպես նշում են հետազոտության մասնակիցները, մեդիագրագիտությունը դպրոցներում տարածելը ենթադրում է տարբեր դերակատարների (պետություն/պետական կառույցներ, ՔՀԿ-ներ, դպրոցներ, ուսուցիչներ, ընտանիք, աշակերտներ) համագործակցություն և ներգրավվածություն:

Պետության/պետական կառույցներ. Ինչպես արդեն վերը նշվեց, պետության դերը մեդիագրագիտությունը տարածելու հարցում պետք է լինի քաղաքականություն, հայեցակարգ և ռազմավարություն մշակելը, չափորոշիչներ սահմանելը և դրան համապատասխան մեթոդաբանություն, գործիքակազմ ստեղծելը, որպեսզի ապահովի չափորոշչի իրականացումը: Որոշ փորձագետներ կարծում են, որ պետության կողմից նոր չափորոշիչների և փոփոխությունների վերաբերյալ հաղորդակցությունը թերի է իրականացվում: Պետք է ունենալ հաղորդակցության ռազմավարություն, որի հիման վրա իրականացվեն իրազեկման արշավներ, ուսուցիչներն ու դպրոցներն արդյունավետորեն իրազեկվեն չափորոշիչների՝ ներառյալ մեդիագրագիտության, պետության պատկերացումների և տեսլականի մասին:

«Պետությունը պետք է կարողանա ապահովել հաղորդակցությունը թիրախ խմբի հետ այնպես, որ ուսուցիչները ցանկանան ակտիվորեն ներգրավվել և ուզենան մեդիագրագիտությունը ինտեգրել իրենց դասապրոցեսներում: Այսինքն, պետությունը ունի որոշակի պատկերացումներ, թե ինչ է պետք անել, բայց դա արդյունավետորեն չի կոմունիկացվում դպրոցների և մանկավարժների հետ, որովհետև կարծում եմ, որ հաղորդակցության սկզբունքները ռազմավարական հիմքերի վրա դրված չեն»: Փորձագետ

Փորձագետներից և ուսուցիչներից ոմանք այս առումով առաջարկում են, որ համապատասխան պետական կառույցում՝ ԿԳՄՍ նախարարությունում կամ ԿԶՆԱԿ հիմնադրամում ստեղծվի բաժին, որի աշխատանքը կլինի մեդիագրագիտության քաղաքականությամբ և հարցերով զբաղվելը, ոլորտը համակարգելը և դպրոցների, ՔՀԿ-ների և պետական կառույցների միջև համագործակցության ապահովումը, ինչպես նաև իրականացված ծրագրերի, ստեղծված ռեսուրսների մշտադիտարկումն ու գնահատումը: Նման խմբի կամ բաժնի առկայությունը կապահովի նաև ծրագրերի և լավագույն փորձի շարունակականությունը:

«Ծրագիրը արդեն այնքան է հասունացել, որ ՀԿ-ների քաղաքացիական հասարակության դպրոցին պետք է համակարգող մի օղակ, որը մասնագիտացած լինի այդ թեմայով, այդ օղակը որ լինի, արդեն արդյունավետ կլինի համագործակցությունը՝ դպրոց, ՀԿ, կառավարություն և այլ օղակներով, մի կառույցում ինչ որ բաժին բացվի 2-3 հոգու ու այդ մարդիկ տանեն այդ քաղաքականությունը»: Փորձագետ

«Ինչ-որ մի պրոյեկտ, ծրագիր, որ այստեղ փակում ենք, դրա երկարաժամկետ տեսլականը կամ թե հետո այդ գործն ով է շարունակելու, ով է հետևողական լինելու, չգիտեն: Ինձ համար ամենամեծ բացն այստեղ է, որ այդ մասին կուզեմ մտածենք, ու կոնցեպտ մշակվի շարունակականության, ծրագրերը համակարգելու, առաջ տանելու ուղղությամբ»: Փորձագետ

«Լինի համակարգող մարմին, ինչպիսին է, օրինակ, ԿԶՆԱԿ-ը»: Ուսուցիչ

Բացի այդ, որոշ փորձագետներ նաև նշում են պետության կողմից ռեսուրսներ տրամադրելու, դրանք ստեղծելու գործընթացի աջակցության և ֆինանսավորման անհրաժեշտությունը: Պետության դերը պետք է լինի նաև ուսուցիչներին և դպրոցներին շահագրգռելը տարբեր խրախուսական հնարներով, քանի որ նորամուծությունները երբեմն դիմադրության են արժանանում ավանդական կրթական համակարգերում, հատկապես եթե դրանք չեն ուղեկցվում խրախուսական միջոցներով կամ հավելյալ ֆինանսավորմամբ:

«Մեկը՝ պարտադիր պահանջը, որ պետք է անել ու վերջ, որովհետև ոչ ոք չի ուզում կոմֆորտ զոնայից դուրս գալ, այդպես իրենց ավելի լավ են զգում: Եվ, էլի նշեցի, մրցանակները, խրախուսանքները շատ են սիրում կամ թեկուզ ֆինանսական աջակցությունը, հոնորարը, խրախուսանքի բոլոր ձևերը շատ արդյունավետ են ու ազդում են»: Փորձագետ

«Ներքին մոտիվացիան կարևոր է, բայց շատ կարևոր է նաև արտաքին մոտիվացիան՝ անհրաժեշտ է, օրինակ, ոգևորող, խրախուսական շնորհակալագրեր շնորհել արժանի ակտիվ ուսուցիչներին»: Ուսուցիչ

«Պետությունը պետք է, կարծում եմ, ռեսուրսներ տրամադրի, նաև ֆինանսական: Նաև կարողանա տրամադրել օրինակ աջակցություն ռեսուրսներ ստեղծվելիս, օրինակ դրանց տպագրությանը, դրանց տարածմանը»: Փորձագետ

Քաղաքացիական հասարակություն. Քաղաքացիական հասարակության կառույցների առումով նշվում է, որ վերջիններս ծրագրեր իրականացնում են ըստ դրամաշնորհների առկայության և շարունակականություն չեն ապահովում, ինչը, սակայն, կարող է ապահովել պետությունը: ՔՀԿ-ների դերը ավելի շատ դիտարկվում է որպես մասնագիտական և փորձագիտական աջակցություն տրամադրող: Քանի որ ՔՀԿ-ները ավելի ճկուն են ու ազատ իրենց գործողություններում, կարող են իրականացնել ինչպես նորարար գաղափարներ, ստեղծել ռեսուրսներ, պատրաստել ոլորտի մասնագետներ, այնպես էլ իրականացնել հետազոտություններ և դոնորներին ներկայացնել բացերն ու կարիքները և զբաղվել ֆոնդահայթայթմամբ: Իսկ պետության հետ համագործակցությամբ թե նորարար մեթոդներն ու գաղափարները, թե ստեղծված ռեսուրսները կարող են ավելի լայն տարածում ստանալ: ՔՀԿ-ների աշխատանքը արդյունավետ դարձնելու համար նաև առաջարկվում է ուժեղացնել ներքին հաղորդակցություն և համակարգել դաշտի գործունեությունը՝ կրկնություններից խուսափելու և միմյանց աշխատանքները փոխլրացնելու համար:

«Իրենց դերակատարումը ավելի շատ այն հատվածում է, որը պետությունը չի կարողանում լրացնել: Խոսքը մասնագիտական, փորձագիտական աջակցության մասին է: Շատ կարևոր են, որովհետև պետությունը ամեն դեպքում ինչքան էլ գեղեցիկ ներկայացնի, իրենք այդ էքսպերտիզան չունեն: Այդ էքսպերտիզան կարող է ՔՀԿ- ն ապահովել»: Փորձագետ

«Մենք՝ որպես պետական կառույց, ինչքան էլ ուզենք անել, փորձել, նպաստել, մասնագիտական, բովանդակային առումով մեր ռեսուրսը քիչ է: Մենք մասնագիտական կառույցների աջակցության կարիքն ունենք՝ բովանդակային մասը ծածկելու և ավելի պրոֆեսիոնալ, արհեստավարժ մակարդակի վրա դնելու և հաջողելու համար»: Փորձագետ

«Քաղաքացիական կազմակերպությունները առաջին հերթին, կարծում եմ, լավ կլինի, որ համակարգվի, համագործակցային հիմքի վրա դրվի աշխատանքները, որպեսզի նախ կրկնություններ չլինեն, փոխլրացվեն իրար հետ, ինչպես օրինակ մենք շատ հաճախ անում ենք ՄՆԿ-ի հետ»: Փորձագետ

Դպրոցի ղեկավարություն. Մեդիագրագիտության տարածման կարևոր դերակատարներից են դպրոցն ու դպրոցի ղեկավարությունը: Դպրոցում մեդիագրագիտությունը կարող է ներդրվել ու արդյունավետորեն տարածվել, եթե դպրոցի ղեկավարությունը կարևորի թեման և հետևողական աշխատանք տանի այդ ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, դպրոցի ղեկավարության դերը կարևորվում է կառավարման տեսանկյունից՝ ստեղծել պահանջ մեդիագրագիտություն ուսուցանելու, վերահսկել, որ այն իրականացվի, ինչպես նաև խրախուսել ուսուցիչներին՝ մասնակցելու վերապատրաստումներին և ինտեգրելու մեդիագրագիտությունն իրենց առարկաներում: Դպրոցներին մոտիվացնելու և մեդիագրագիտությունն ինտեգրելու միջոց կարող է լինել դպրոցի կամ տնօրենի աշխատանքի գնահատման չափանիշում դրա առկայությունը հաշվի առնելը կամ դպրոցի զարգացման պլան գրելիս պարտադիր պայման դնելը, որ այն պետք է մեդիագրագիտության տարրեր պարունակի:

> «Դպրոցի ղեկավարությունը ունենա այն պատկերացումը, որ դա ոչ թե յուրաքանչյուր անհատ ուսուցչի պարտականությունն է՝ դրված ինչ-որ չափորոշիչով, այլ դա դպրոցում որոշակի մթնոլորտ ստեղծելուն ուղղված պարտականություն է»: Փորձագետ

> «Օրինակ լավ կլինի, որ դպրոցի աշխատանքը մենք գնահատենք նաև ըստ այն բանի, թե իրենք ինչ են անում մեդիագրագիտության ասպարեզում»: Փորձագետ

Ուսուցիչներ. Ուսուցիչները մեդիագրագիտության տարածման գործում դիտարկվում են որպես ամենակարևոր օղակը, քանի որ ուսուցիչներն են անմիջապես աշխատում աշակերտների հետ և փոխանցում այդ գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև ուսուցիչներն են, որ ապահովում են կապը ծնողական համայնքի հետ: Այս համատեքստում ընդգծվում է ուսուցիչների վերապատրաստման և մեդիագրագիտության գիտելիքներ ունենալու հրամայականը: Եթե դպրոցների ղեկավարության դերակատարության հատվածում նշվում է, որ իրենք պետք է շահագրգռեն և խրախուսեն ուսուցիչներին մեդիագրագիտությունն ինտեգրել իրենց առարկաներում, ուսուցիչների առումով էլ նշվում է, որ հենց իրենք կարող են մոտիվացնել և ներգրավել ղեկավարությանը մեդիագրագիտության նախաձեռնություններում և տարածել այն դպրոցում: Ծնողները՝ որպես ուսուցիչների շրջանում մեդիագրագիտության տարածման և ուսուցիչների միջոցով աշակերտներին այս գիտելիքների փոխանցման մեթոդներ, առաջարկել են փոխօգնության խմբերի ստեղծումը (երբ ուսուցիչները մեկը մյուսի համար իրականացնում են վերապատրաստումներ, ստեղծում են գիտելիքների փոխանցման հարթակներ, վերապատրաստումն իրականացվում է դպրոցի մեթոդիստի կողմից և այլն), ուսուցողական խաղերի, ինտերակտիվ վերապատրաստման կուրսերի ստեղծումը: Ծնողների կողմից կարևորվել է նաև աշխատանքը տնօրենների հետ:

> «Ամենաառաջին դերակատարումը՝ ոչ միայն իմանան դրա կարևորությունը և տիրապետեն գործիքակազմին, այլև ունենան հմտություններ և սովորեցնեն, և ադվոկացիա անեն ծնողների և ընտանիքի մնացած անդամների շրջանում: Կոպիտ ասած, իրենք մեդիագրագիտության brand ambassador-ները պետք է դառնան, դրա համար առաջնային ուսուցիչների հետ պետք է աշխատել»: Փորձագետ

Որոշ փորձագետներ, սակայն, նշում են, որ ուսուցիչները առանց այդ էլ ծանրաբեռնված են և երբ իրենց հիմնական ծանրաբեռնվածությանը ավելանում է ևս մեկը՝ առանց հավելյալ խրախուսանքի կամ աշխատավարձի բարձրացման, ապա կարող է ֆրուստրացիա և դիմադրություն առաջանալ վերջիններիս կողմից: Այս առումով կարևորվում է, որ ուսուցիչների վրա լրացուցիչ

պարտականություն դնելիս նաև պետք է հաշվի առնել այս հանգամանքը և խրախուսման մեխանիզմներ գտնել:

> «Իրենք առանց այն էլ ծանրաբեռնված են, առանց այն էլ իսկապես շատ ծանր գործ են անում և հիմա մի հատ էլ հավելյալ իրենց վրա դրվում է մեդիագրագիտություն, մեդիակարողություններ, նոր չափորոշիչներ, և սա շատ հասկանալի ֆրուստրացիա է, հետևաբար, որպեսզի այդ ֆրուստրացիան չլինի նրանց պետք է աջակցություն»: Փորձագետ

Լրատվամիջոցներ. Լրատվամիջոցների դերը ևս դիտարկվում է մեդիագրագիտության տարածման հարցում: Մասնավորապես, համարվում է, որ լրատվամիջոցները պետք է լինեն ոչ միայն մեդիա արտադրողներ, այլ նաև կրթողներ: Սակայն հաճախ նշվում է, որ լրատվամիջոցների մեծ մասը, պայմանավորված իրենց շահերով, չեն իրականացնում իրենց այդ գործառույթը: Լրատվամիջոցները, կրթական գործառույթից բացի, դիտարկվում են նաև մեդիագրագիտության վերաբերյալ իրականացված նախաձեռնությունների լուսաբանման տեսանկյունից:

> «Օրինակ՝ Հետքը կարևորում է, ես դա համարում եմ մեդիագրագիտության, մեդիա ուսուցման շատ լավ հնարավորություն, որտեղ մեդիայի միջոցները պետք է լինեն ոչ միայն մեդիա արտադրողներ, այլ նաև կրթողներ ու երբեմն իրենք ավելի լավ այդ ամեն ինչը կսովորեցնեն, քան, ասենք, օրինակ իմ նման մարդիկ, որոնք ժամանակին եղել են լրագրող, բայց հիմա չէ»: Փորձագետ

Ծնողներ/ընտանիք. Ծնողները/ընտանիքը ուսուցիչներից հետո, հետազոտության մասնակիցների կարծիքով, հաջորդ ամենակարևոր օղակն են համարվում դպրոցահասակ երեխաների շրջանում մեդիագրագիտություն տարածելու առումով: Նրանք նշում են, որ կարևոր է նաև տանը շարունակել այն աշխատանքը, որը կատարվում է դպրոցում: Այս առումով, ինչպես արդեն նշվել է, կարևոր է ծնողական համայնքի հետ աշխատանքը և նրանց հետ մեդիագրագիտության վերաբերյալ քննարկումներ ունենալը ինչպես նաև նրանց վերապատրաստումներում ներգրավելը:

> «Ծնողներից ամենամեծ, այսինքն ինչ ասեմ, ծնողները ինձ համար ամենակարևոր խաղացողներն են, ամեն ինչում իրենցից է շատ բան կախված, բայց ծնողների պրոբլեմը այն է, որ մի մասը չեն գիտակցում իրենց խնդիրները, իսկ մյուս մասն էլ ժամանակ չունեն»: Փորձագետ

Աշակերտներ. Աշակերտները մեդիագրագիտության տարածման թիրախն են և այս առումով սպասվում է, որ վերջիններիս պետք է ոգևորել և ներգրավել ուսուցանման գործընթացում՝ այն դարձնելով մասնակցային և ինտերակտիվ: Այս հարցում կարևորվում է թե՛ ուսուցիչների, թե՛ դպրոցի, թե՛ ընտանիքի դերը:

> «Ճիշտն ասած դժվար է այսօր աշակերտների ուշադրությունը գրավել, աշակերտների պատասխանատվության վրա թողնելը մի քիչ ռիսկային է, որ իրենք ինքնուրույն ինչ որ բան կարող են անել, հայթայթել, գտնել, սովորել՝ հենց մեդիագրագիտության վերաբերյալ եմ ասում: Աշակերտների համար պետք է ստեղծվեն հնարավորություններ, որ իրենք իրենց հետաքրքրող ձևաչափերով, իրենց հարազատ հարթակներում ստանան այն բովանդակությունը, որ այսօր անհրաժեշտ է մեդիագրագետ լինելու համար»: Փորձագետ

Այլ դերակատարներ. Նշվածներից բացի հետազոտության մասնակիցները նաև շեշտել են այլ կառույցների դերակատարությունը: Մասնավորապես, ոստիկանության դերն է կարևորվում: Նշվում է, որ ոստիկանությունը պետք է աշխատի դպրոցների, ՔՀԿ-ների, կառավարության հետ, որպեսզի, օրինակ, կիբեռհանցագործության ոլորտում ի հայտ եկած ռիսկերի մասին իրազեկի դպրոցներում, և այդ իրազեկումները դառնան կրթական ծրագրի մի մաս: Այլ դերակատարների

շարքում նշվել են նաև մարզպետարանները, քաղաքապետարանները, որոնց ենթակայության տակ են գտնվում հիմնական դպրոցները, որոնց դերը պետք է լինի մեդիագրագիտության նախաձեռնություններին աջակցությունն ու խրախուսումը:

> «Ոստիկանությունը չմտածի, որ իր խնդիրը մենակ հանցագործություններ բռնելն է, երբ որ տեսնում են, որ մի խնդիրը սուր է, ոստիկանությունը կարող է անմիջապես բերել ուրիշ տեղ և արդեն կրթության նախարարությունը, ՀԿ-ները համատեղ փորձեն ինչ-որ կրթական ծրագրերով դարձնել կանխարգելող»: Փորձագետ

Ամփոփելով, ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ վերը նշված յուրաքանչյուր դերակատար շղթայի մի մասն է, և որևէ դերակատարի բացակայությունը կամ պասիվությունը հանգեցնելու է ոչ լիարժեք և ցածր արդյունավետությամբ արդյունքների: Եթե պետությունը մշակում է քաղաքականությունը և սահմանում չափորոշիչներ, սակայն դպրոցը հետևողական չէ դրանց իրականացմանը կամ հետևողական չեն ուսուցիչները կամ հակառակը, ապա արդյունք չի գրանցվելու:

Եզրակացություն և առաջարկներ

Մեդիագրագիտությունը արդի հմտություն է, որը պետք է ունենա յուրաքանչյուր անձ՝ սկսած փոքր տարիքից: Մեդիագրագիտության տարածման կարևոր թիրախներից են դպրոցահասակ երեխաները, քանի որ այդ տարիքում երեխաներն արդեն այս կամ այն կերպ օգտվում են մեդիայից և թվային տեխնոլոգիաներից: Դրանցից գրագետ օգտվելու, մեդիա և առցանց ռիսկերից խուսափելու և պաշտպանված լինելու համատեքստում էլ առաջ է գալիս բազային գիտելիքներ ունենալու հրամայականը:

Ներկայումս, մեդիագրագիտության նախաձեռնությունների հիմնական իրականացնողները ոլորտում գործող մի քանի կազմակերպություններն են, և դպրոցներում մեդիագրագիտության ուսուցումը համակարգային բնույթ չի կրում: Քիչ դպրոցներ կան, որտեղ ուսուցիչները իրենց առարկաներում ինտեգրել են մեդիագրագիտության թեմաներ, ունեն մեդիագրագիտության խմբակներ, իրականացնում են մեդիագրագիտությանն ուղղված նախաձեռնություններ: Այս առումով մեդիագրագիտության ուսուցումը հատվածական բնույթ ունի և կղզյակների տեսքով է:

Մեդիագրագիտության տարածումը դպրոցներում շղթայական գործընթաց է, որը ներառում է տարբեր դերակատարներ՝ պետությունից մինչև ընտանիք: Դպրոցներում մեդիագրագիտության տարածման մի շարք խնդիրներ են նույնականացվել: Մասնավորապես, չկա մեդիագրագիտության տարածման պետական քաղաքականություն և հայեցակարգ, ինչը կարևոր է համարվում մեդիագրագիտության զանգվածային տարածման համար: Այս առումով կարող են օգտակար լինել ՔՀԿ-ները, որոնք կարող են տրամադրել մասնագիտական աջակցություն և խորհրդատվություն: Մեդիագրագիտության տարածման էական օղակներն են դպրոցները և ուսուցիչները: Սակայն, թե դպրոցների ղեկավարության, թե ուսուցիչների շրջանում առկա է մեդիագրագիտության և թվային գրագիտության գիտելիքների և հմտությունների, ինչպես նաև ռեսուրսների պակաս:

Մեդիագրագիտության տարածման գործում կարևոր է նաև ընտանիքի և ծնողների դերը, որպես երեխայի սոցիալականացման առաջնային օղակ, որոնք օրինակ են ծառայում երեխաների համար և ում փորձում են նմանվել երեխաները իրենց վարքագծով: Այս առումով խնդիր է նաև ծնողների շրջանում մեդիագրագիտության գիտելիքների և հմտությունների պակասը և դպրոց-ուսուցիչ-ծնող թույլ կապը մեդիագրագիտության ապահովման շուրջ աշխատանքում:

Չնայած ոլորտում առկա բազմաթիվ խնդիրներին, հետազոտությունը նաև ցույց է տալիս, որ աշակերտները ակտիվ և ոգևորությամբ են մասնակցում մեդիագրագիտության նախաձեռնություններին, քանի որ ուսուցման գործընթացը հիմնականում մասնակցային է և սովորելուց բացի աշակերտներն իրենք էլ են սովորեցնում ուսուցիչներին, ծնողներին, այլ աշակերտներին, այդպիսով նաև ամրապնդելով իրենց գիտելիքը, ինչպես նաև իրենք են ստեղծում մեդիա բովանդակություն:

Այսպիսով՝ հիմնվելով հետազոտության արդյունքների վրա, դուրս են բերվել մի շարք առաջարկներ, որոնք կարող են նպաստել մեդիագրագիտության տարածմանը դպրոցներում և որոնք ուղղված են թե պետական և ակադեմիական կառույցներին, թե ոլորտում գործունեություն ծավալող այլ կառույցներին:

- Ունենալ պետական քաղաքականություն և հայեցակարգ մեդիագրագիտությունը դպրոցներում տարածելու համար: ՔՀԿ-ներին՝ աջակցել պետությանը դրանց մշակման հարցում:

- Իրականացնել խորքային վերապատրաստումներ ուսուցիչների շրջանում թվային գրագիտության, մեդիագրագիտության և քննադատական մտածողության վերաբերյալ:
- Մեդիագրագիտության թեման ներդնել մանկավարժական որակավորում շնորհող կրթական հաստատությունների ծրագրերում:
- Դպրոցների ղեկավարության և ուսուցիչների շրջանում իրազեկման արշավներ իրականացնել մեդիագրագիտությանն առնչվող պետական չափորոշչի վերաբերյալ:
- Մշակել տարիքին և դասարանին համապատասխան մեդիագրագիտության ինտեգրման ուղեցույցներ, որոնք համապատասխանում են ուսումնական պլանի չափանիշներին: Հասանելի դարձնել այդ ուղեցույցները դպրոցներին և ուսուցիչներին:
- Ուսուցիչների համար ստեղծել հարթակ, որտեղ հավաքված կլինեն մեդիագրագիտության վերաբերյալ բազմաթիվ ռեսուրսներ՝ ձեռնարկներ, ուղեցույցներ, գործիքակազմ, դեպքերի, օրինակների և պատմությունների շտեմարան, որտեղից ուսուցիչները կկարողանան գտնել այն, ինչ անհրաժեշտ է մեդիագրագիտությանն առնչվող թեմաները ուսուցանելու համար:
- Տարբեր դպրոցներում մեդիագրագիտության ուսուցանման հաջողված դեպքերը և պատմությունները, դրական փորձը տարածել այլ դպրոցների շրջանում:
- Կազմակերպել քննարկումներ ծնողական համայնքի համար՝ մեդիագրագիտության կարևորության և երեխաներին աջակցության մասին: Ծնողների հետ կիսվել ռեսուրսներով և խորհուրդներով, որոնք կօգնեն նրանց առաջնորդել իրենց երեխաներին թվային և մեդիա աշխարհում:
- Աշակերտների շրջանում մշակել մեդիագրագիտության հմտությունների գնահատման գործիքակազմ: Իրականացնել վերապատրաստումների, ինչպես նաև պետական չափորոշիչների կիրառման մշտադիտարկում և գնահատում հասկանալու համար դրանց արդյունավետությունը: